ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<10>> նոյեմբերի 2021թ. ՆՄՈ/536 -2021

ք. Արմավիր

<<ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆԱՐԵԿ ՏՈՄԻԿՅԱՆԻՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք>> սահմանադրական օրենքի 137-րդ հոդվածի 1-ին մասով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով <<Բաղրամյանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2021 թվականի նոյեմբերի 9-ի դիմումը.

որոշում եմ՝

1. 2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու հերթական ընտրություններին գրանցված <<Քաղաքացիական Պայմանագիր>> կուսակցության ցուցակով ավագանու անդամի թեկնածու հանդիսացող Նարեկ Տոմիկյանին, նոյեմբերի 10-ից մինչև դեկտեմբերի 5-ը, օրենքի ուժով ազատել ծառայողական պարտականությունների կատարումից, այդ ժամանակահատվածում նրա բացակայությունն աշխատանքից համարել հարգելի՝ առանց վարձատրության պահպանման:
2. 2021 թվականի նոյեմբերի 10-ից մինչև դեկտեմբերի 5-ը <<Բաղրամյանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը վերապահել նույն կազմակերպության հոգեբան Կարինե Սահակյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

10.11.2021

VERIFIED OCSP 10.11.2021 18:19:33 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230